

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 23

7 ՅՈՒՆԻՍ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթերի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հառսուն դրո. եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանք կամ 5 բուլլի: Թղթաստրական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն հմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Քի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, ղիւրամասչելի պայմաններով:

Ձեռն-Բէ. ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليهده غلطهده (ماسيس) غرضهسى ادارهسى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Հիւանդութեանց դէմ ապահով է եթէ իր մէջը չեղանուի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ)

(Թորախտ, պրօնչիտ, հազ, հարբուխ և բարակեցու, և տղայոց անդամներու թուլութիուն, խոյլ (սըրածա) և բոլոր արեան աղետներու համար անգին դարման մըն է. Առաջին անգամ առնուելով բժշկելու կ'ըսկի և կը շարունակէ: Ամեն տարի հազարաւոր տղայք մահուանէ ազատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և մարմնոյ կեանք կուտայ: Գեղերու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Ս'իշտ վրան այս պատկերով վարդագոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Շեշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

26

Բոլոր դեղատոմսերը և դեղաշաճարները կը ծախեն:

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ դոհարեղէններ ունենալ, աժառն ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ դաւաղաններ եւ այլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ մնասուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին: Իսկ ապագիկ զընողներէն՝ 100ին 15 զեղչով:

Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան զխմել կամ մուրջին դուրը լրագրաւաճառ Մաղիսաք այլին:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ ամառը օր եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք և պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ՆԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Ձինաստանէն, Հնդկաստանէն, Ճաւայէն եւ Սէլանէն ուղղակի բերել տուած քաւմ, հոսաւեք եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, Ճէլալ պէյ իւան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



LA CONFIANCE



ԼԱ. ՔՕՆՖԻԱՆՍ

Ա.ՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Յրանս. Կառավարութեան ֆոնդովին ներքեւ, երաշխաւորեալ գրամագուլտ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ զաղափօր մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Յրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարիզի՝ Օրէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարչէն, Լուվրի վաճառատունները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտիւնիէրի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հալը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Փրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր կազմական կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Յրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբ ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ. — Պօլիս, Մահմուտ փաշա, Պէօյիւք Եըլտըզ խան, թիւ 14, Լա Դօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անբիւի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆաղաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

17. GOVERNMENT

U. S. DEPT. OF THE INTERIOR

OFFICE OF THE GEOLOGICAL SURVEY

WASHINGTON, D. C.

The following report was prepared by the Geological Survey of the Department of the Interior, under the direction of the Chief of the Survey, and is published by the Government Printing Office, Washington, D. C., at the expense of the Government.

Report of the Chief of the Geological Survey, for the year ending June 30, 1881.

By J. W. Powell, Chief of the Survey.

Published by the Government Printing Office, Washington, D. C., 1882.

Price, 10 cents.

For sale by the Superintendent of the Government Printing Office, Washington, D. C.

Entered as second-class matter, June 3, 1879, under No. 100,000, Post Office at Washington, D. C., authorized by Act of Congress, October 3, 1878.

Acceptance for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1878, authorized on July 1, 1882.

Postage paid at Washington, D. C.

ՄԱՍԻՍ

527, ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻ 23

7 ՅՈՒՆԻՍ 1903

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԷՏՄՕՆ ՌՕՍԹԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Ակադեմական ընտրութիւնները .— Բանի մը մերժուածներ .— Ինչո՞ւ հաստատուեցաւ Կոն-
փուլներու Ակադեմիան .— Ռոսքանի ընդունելութիւնը .— Բաղդասուրիւն Հանրի ԵՐ Պոնքիի
եւ Ռոսքանի զործերուն .— Բաղդիւն մեկ առանձնացնորհեալը .— Ռոսքան եւ Ֆրանս. գրա-
կանութեան նորագոյնները :

Ֆրանսական Ակադեմիան շատ փայլուն ըն-
դունելութեամբ մը նուիրագործեց Էստֆան
Ռոսքանի ընտրութիւնը, հանգիստաւոր նիստի
մը մէջ որ նշանակելի պիտի մնայ քանի մը
տեսակէտներով :

Ակադեմական ընտրութիւնները՝ տաղան-
դի, արժանիքի նուիրագործումէ մը աւելի
տեսակ մը պայմանադրական առաքինու-
թեանց, անձնական յարաբերութիւններու եւ
ներքին ու արտաքին ազդեցութիւններու
պսակումը նկատուած են միշտ : Դո՞ւնէ երկար
ատեն կայ որ այս ըմբռնումը կազմուած է
այդ ընտրութեանց մասին, եւ պէտք է ըն-
դունիլ թէ պատճառներ չեն պակսած . ընդ-
հակառակը : Ակադեմիան, յաջորդաբար իրեն
անդամ ընտրած է կարգ մը կասկածելի ար-
ժանիքի տէր գրագէտներ՝ որոնց բովանդակ
գործը զիրենք անմահներու աթոռը բազմե-
ցնելէ տարբեր բանի չէ ծառայած բնաւ, եւ
որոնց պատճառաւ Մազարինեան Տան նշա-
նակութիւնը այնչափ ողորկեցած է ճշմարիտ
գրողներու աչքին : Եւ ատոնց փոխարէն որ-
չմի գրչի արուեստագէտներ որոնք երկրին
գրականութեան փառքերը նկատուած են,
որոնք նպատաւ են երկրին գրականութեան
բարձրացման, ու այլ եւ այլ պատճառներու
բերմամբ չեն կրցած անմահներու այդ զբո-
ուարարեալ մեհեանին մէջ քուրմի աթոռ մը
կորցնել : Զոյա, ամէնէն ծանօթը մերժուած

ներուն, թէ՛ իր նախորդները ունեցած է եւ
թէ՛ իր հետեւորդները : Հիւկոն անգամ շատ
գոհաբար, եւ երկար սպասումներէ վերջ
միայն յաջողած է անմահներու կանանչ հա-
մադրեալը հաղնիլ :

Ֆրանսայի մէջ առակի կարգ անցած է
այս սարադան, եւ տեղի տուած ծաղրանքի
հոսանքի մը՝ որուն առջեւ իսկապէս արժա-
նիք ունեցող քանի մը ակադեմականներու
գոյութիւնն իսկ չէ կրցած թուալ մը դառնալ :
Ակադեմականներ կան որոնց անունը Ֆրան-
սայիք անգամ չեն գիտեր, որովհետեւ անոնք
իրենց անհատիկի մնացած են իբր գրագէտ,
որովհետեւ անոնց մէկ քանի յանցաւ գոր-
ծերը, — ընդհանրապէս պատմական կամ բա-
նասիրական մենագրութիւններ, մատենագա-
րանի տէրերու միայն ծանօթ մնացած են . . .
իրենց կողքին գեղեցկութեամբ եւ կամ
վերնագիրովը :

Երգեր, բանասիրութիւն, հեքիսթներ, ու
տակաւին շատ մը բաներ գրուած են Ակա-
դեմիին ընտրութեանց նկատմամբ . գրեթէ
ամբողջ գրականութեան մը ծնունդ տուած
է, գրականութիւն մը՝ որուն մէջ գեղեցիկ
ու սիրուն կտորները երկրորդական տեղը չէ՛
որ կը բռնեն . իր ընդունելութեան ձեւակեր-
պութիւններն ալ, մանաւանդ պարտաւորիչ
այցելութիւններու նուառացնող, ստորնա-
յընող գրութիւնը, մէյ մէկ պատճառ առելի

եղած են ատոր վրայ, և շատ հեղ, ծաղրանքի հետ տեղի տուած են նաև բողոքի բաւական լուրջ արտայայտութեանց: Բիւսոն՝ մերժման հանդիպելով, ուղած էր վրէժը տապանադրով մը լուծել, և գերեզմանին կատարը արձանադրել տուած էր կարծեմ հետեւեալ տողերը. —

Ci-git Piron
Qui ne fût rien
Pas même
Un Académicien.

Տօնէ՛ մերժուած չըլլալով հանդերձ՝ ամբողջ հատոր մը գրած է, Խմսօքիլը, — Ակադեմիին դէմ ուղղուած ամէնէն նշանակելի բանքին, — եթէ կարելի է այսպէս անուանել: Բնապաշտ վիպասանը պահ մը կը ցանկայ ակադեմական թեկնածութեան, բայց երբ կը հասկնայ թէ իր արժէքին գիտակից գրողի մը համար այնչափ ստորնացուցիչ այցելութիւններ, սողոսկումներ, նուաստացումներ պէտք են, «երբեք չեմ կրնար Ակադեմական ըլլալ», կը գոչէ: Իր յուսախաբութենէն սակայն գրականութիւնը շահած է այդ իր անունին պէս անմահ գործը, — Խմսօքիլը, — որուն մէջ զմայլելի եղանակով մը և շատ նուրբ հեղինութեամբ մը պատկերացուած են ակադեմական ընտրութեանց բոլոր գոտտ ու ծաղրելի կողմերը:

Կոնքուռները, աւելի առաջ կը թալուի, իրենց կտակով հաստատած են ուրիշ Ակադեմի մը, — Կոնքուռներու Ակադեմին, — որ վերջերս վաւերացուցաւ Ֆրանսայի Պետական Խորհուրդին կողմէ: Գրականութեան տարածման ու քաջալերութեան, արժանիքին պատկման, աստուածացման նպատակները միայն ուղած են տալ Ակադեմի անունը կողմ հաստատութեան մը, և այս մտքով ծրագրած են Կոնքուռներու Ակադեմին՝ ուր միմիայն իրենց տաղանդով, իրենց գործերով ծանօթ գրողներ պիտի կրնային մուտ գտնել, և նիւթական վարձատրութեան մը չնորհիւ ուղածնուն պէս աշխատիլ, դրամական ամէն հոգերէ զերծ ու ապահով:

* * *

Ֆրանսական Ակադեմին՝ իր այս անգամ

ուան ընտրութեամբը ազատ կը մնար այդ քննադատութիւններէն: Նորընտիր անմահը, Էտմոն Ռօսթան, ակադեմական աթոռի մը թեկնածու դառնալէն առաջ արդէն իսկ պէտք եղածէն աւելի վկայականներ ունէր իր տաղանդն ու արժանիքը հաստատող: Բանաստեղծի և թատերագրի յատկութիւններ իրեն անուն մը շինած էին համեմատապէս չա՛տ քիչ ատենուան մը մէջ, և չա՛տ ալ ամուր հիմերով: Իր խաղերը, — վերջին երկուքը մանաւանդ՝ Սիւսանն և Էկլիօն, — հարիւրաւոր ներկայացումներու միջոցին ժողովրդին անխտիր բոլոր դասակարգերուն կողմէ ծափահարուելէ վերջ հարիւրաւոր ալ տպագրութիւններու հասած էին: Իր համբաւը մի՛ միայն Ֆրանսայի մէջ չէր սահմանափակուած, այլ տարածուած էր աշխարհի չորս կողմը, բոլոր այն տեղերը ուր Գրականութիւն և Թատրոն իրենց արժանի գնահատման մը առարկայ կը դառնան: Քննադատութիւնն ալ իր կողմն էր, և իր գործերուն մէջ երկու թերութիւն մատնանիլ՝ ըրած միջոցին տասը եւ աւելի յատկութիւններ կը գտնէր յիշատակելիք: Ռօսթան՝ դուրսը փառապատկով մը կը ներկայանար Ակադեմիին, տակաւին անոր դափնիներով չպճնուած:

Եւ ամբողջ Բարիկ, ինչպէս նաև բազմաթիւ նշանաւոր օտարազգիներ դայած էին լսելու այդ հաղիւ քսանըհինգ տարեկան անմահը՝ որ իր տաղանդին ու յատկութիւններուն հետ երիտառարդութեան վառլուռն ու շնորհալի հովը կը մայնէր Մազարինեան Տան գմբեթէն ներս, մեծ մասամբ ձերուկ, ալեւորիկ և աղճատած ակադեմականներու քով: Նիստը շատ հանգիստաւոր ու գեղեցիկ պիտի ըլլար. բանաստեղծութեան աստուածացում մը կը սպասէին արտասանուելիք ճառերէն, մէկը գրուած ոտանաւորի վարպետի մը՝ Ռօսթանի կողմէ, որուն առաջին արձակն էր արդէն, և միւսն ալ հիւսուած արձակի ճրջմարիտ իշխանի մը՝ Տը Վոկլուէ մարքիզին կողմէ, որուն մտքին յատկութիւնները այնչափ նուեմացուցած են իր ազնուականութեան մագաղաթները:

Ոչ ոք յուսախաբ եղաւ, և նիստին ար-

տաքոյ կարգի վայրը քիչ մըն ալ նախատեց Սկադեմիին որ երկար առնէն ի վեր խօսեցնել չէր տար իր վրայ: Կը դուռնակուէր միայն թէ ամէնէն դժուարին դործը Ռօսթաւնինը պիտի ըլլայ: Իր նախորդը, Հանրի տը Պօռնիէ, որուն գովեստը ընելու պարտաւոր էր, մտքով, արտադրութեամբ այնչափ հարուստ չէր եղած, որչափ անքիծ համբաւ մը չաճած էր իբր բարի ամուսին և հայր, տոգորուած աւատական աղնուականի մը սահմանափակ խոտաներով, պաշտպան բոլոր պայմանադրական առաքելութեանց, սիրահար ամէն աղնիւ դործի, քիչ մը փէմնիսթ և քիչ մըն ալ հետամուտ գիւղատնտեսութեան, հոգ չէ թէ, —ինչպէս կը հաւատան, —չկարենար կանկառն ու ձակնդեղ իրարմէ որոշել: Եւ աւելի այդ յատկութիւններուն աստուածացումն է որ կը տեսնուի Ռօսթանի դրուատականին մէջ, քան թէ փառաւորումը բանաստեղծ—թատերագրի մը:

Բանաստեղծութեանց հատորով մը սկսած է Հանրի տը Պօռնիէ, Առաջին քերականութեան անտարբերութեամբ կ'ընդունուին: Յետոյ կը դառնայ Թատրոնին, և առաջին գործը, Լուսերի ամուսնութիւնը, կը ստիպուի մէկ կողմ թողուլ ծրարած, և պատրաստել երկրորդ մը՝ Տանքի և Պեքրիէ՝ որ իր կարգին չի ներկայացուիր: Առաջին յուսախաբութիւններն են ասոնք, ընդհանրապէս այնքան ընկճող ու վճռական՝ նոր գրողներու համար: Այս հեղ, կիրքի ընդվզումներու անձանօթ մարդը սակայն չի յուսահատիր. կը գրէ, միշտ կը գրէ, վէպեր, ոտանաւորներ, տաւաններ, կը գրէ առանց մեծ յաւակնութիւններ անուշանելու և առանց փառքին ու յաջողութեան ընդ առաջ վազելու: Կը սպասէ որ փառք իրեն գայ, և հոգ չըներ տարիներուն անցնիլը, մաղերուն ճերմկիլը. համբերող մըն է ամէն բանէ առաջ, և միամիտ այնչափ՝ որչափ պէտք է հերոսը ըլլալու համար հետեւեալ մանրամասնութիւնս. —

Նեղութեան օր մը՝ Տը Պօռնիէ կը յաջողի Քօմէսի ֆրանսէզի մուտքի տոմարներէն հատ մը ձեռք ձգել, և ներկայացման միջոցին կերպով մը կը մտերմանայ դրացիի մը

հետ, որուն կը խոստովանի բանաստեղծ մը ըլլալը: Այդ միջոցներուն աւարտած է իր Տիւֆէկիէնը, ու բնականաբար անոր մասին ալ երկար բարակ տեղեկութիւններ կու տայ խօսակցին:

Այս վերջինը, հսկայ կաղմուածքով ու խոշոր պեխերով մարդ մը,

—Ի՞նչ կ'ըսէք, կը գոչէ, ատանկ խաղ մը գրած էք ու տակաւին կը վարանի՞ք...

—Բայց ի՞նչ կրնամ ընել, կը պատասխանէ Տը Պօռնիէ՝ շուարած:

—Ի՞նչ պիտի ընէք... Ինչ պիտի ընէք... Ինձի բերէք զայն... ես ալ թատրոնէն եմ, և ո՞վ գիտէ, թերեւս կարենամ բան մը ընել անոր ընդունելութեան համար:

Տը Պօռնիէ, ուրախութեան արշնչու, շիտակ տուն կը վաղէ, և յաջորդ օրն իսկ, առանց տակաւին մարդուն ո՞վ ըլլալը գիտնալու, թատերախաղը անոր տանելով կը կարգայ:

Մարդը՝ ամէն մէկ պարբերութեան չի կրնար հիացման աղաղակ մը զսպել, և անընդհատ կը գոչէ.

—Bien riposté!—Fendu à fond!—Touche!—Գնահատման կերպեր՝ որոնք աւելի զինավարժութեան սրահի մը մէջ կը լսուին: Յոյսէն կուրցած բանաստեղծը շատ ուշ միայն կը հասկնայ թէ իր խաղը թատրոնին զինավարժութեան դասատուին կարդացած է, և թէ հետեւաբար չի կրնար անկէ ո՛ր և է օգնութիւն մը ակնկալել:

Իր կեանքին մէջ ասոր նմանող օրինակներ չեն պակսիր, և իր գրական արտադրութիւնն ալ տարբեր գրող մը չէ՝ որ կը կրէ: Նուիրագործուած զգացումներէ, պայմանագրական բարոյականի մը թոյլատրած կիրքերէն, ցասումներու ամէնէն աստուածայինէն տարբեր զգացութիւններ, կիրքեր, ընդվզումներ երբեք չեն ներկայացուած իր գործերուն մէջ: «Դրած բոլոր գիրքերս ալ պէտք է որ կարենամ առանց նկատումի զաւկներուս ձեռքը տալ», ըսած է, և կրնաք երեւակայել թէ այդ խառնուածքը ունեցող մարդ մը ի՞նչ կրնար տալ իր զաւկներուն ձեռքը: Անգամ մը միայն, Լը Բիգ քը ՂԱՆԵԿՆԵՐԻՆ մէջ, ժու-

մանակակից լրագրող մը ներկայացնելու հարկին մէջ դանուելով, կը ստիպուի չեղում մը ընել իր տարիներու ուղղութենէն: Այդ լրագրողի տիպարը մաքուր բան մը չէ, երեւակայուելիք բոլոր ստորնութիւններն ու մոլութիւնները ունի. կը խառնուի ամէնէն կասկածելի և աղտոտ գործերու, կը սողոսկի, կը հայհոյէ, կ'անուանարկէ, կը ղեղձանի և տեղին համեմատ կը ստանձնէ ամէնէն հասարակ միջնորդութիւնները: Տը Պոռնիէ՝ ամբողջ առաջին արարուածը կը նուիրէ՝ անոր պատկերացման, բայց ի վերջոյ ինքն ալ կը սոսկայ արդիւնքէն՝ և ձեռքերը երկինք բարձրացուցած, կնոյր վրայ կը վաղէ գոչելով. «Օհ, ահաւր բաներ կը գրեմ»: Երկրորդ արարուածին՝ չի կրնար խաղը այդպէս առաջ տանիլ, և ուրիշ միջոց չունենալուն համար այդ միեւնոյն լրագրողի տիպարը կը ներկայացնէ զոյջացած, մաքրուած, արդէն իսկ ասլաշաւի կեանքի մը սեմը անցած:

Այս տկար հոգին սակայն, իր ժողովրդականութեան օրերը ունեցած է շնորհիւ խաղի մը՝ Լա Ֆիյ սը Ռօլանին, որ իր գլուխ-գործոցը կը նկատուի, և որ թերեւս իր միւս գործերուն բաղդը ունենար, առանց թրանքօգերման պատերազմին: Իր փառքին սկզբնաւորութիւնն է ատիկա: Ահաւոր պարտութեանէն վերջ երկիրը տակաւին ընկճուած, անհուն փղծկումով մըն է որ կ'ընդունի այդ խաղը, փառաւորումը Յրանսայի յաղթապանծ օրերուն: Խաղին դրուագները, նոր հէքեաթի մը—Ռօլանի աղջիկ մը ունենալուն—ստեղծումը, ոտանաւորին գեղեցկութիւնը չէ՝ որ այդ գործը ժողովրդին կը մօտեցնեն: Թատրերգութեան մը կազմութեան շքեղութիւնը, գրուածքին բարձրութիւնը, դրուագներու վարպետի հիւսուածքը, եւայլն, պարզ յատկութիւններ են միայն՝ որոնք շատ անգամ հեղինակին նպատակը կը նսեմացնեն կամ կը մոռցնեն՝ արտաքին փայլի մը, շքեղանքի մը քողին տակ, փոխանակ անոր յայտնութեան նպատակու: Թատերագիրը իր զգայնութեանէն, իր իտէալէն պէտք է անա՛նկ բան մը դնէ խաղին մէջ, որ տպաւորութիւնը ընդհանուր ըլլայ, որ ընդհանուրին հոգին յուզուի, որ ամէն մարդ միեւնոյն ոգեւորու-

թեամբ փղծկի և միեւնոյն սիովանքը իմանայ: Պարտութեան օրերէն վերջ Յրանսայ իր թախիժն ու վիշտը ամոքող գործ մը կը վնասէ: Մէկը պէտք էր զինքը սրտապնդելու համար, մէկը պէտք էր որ խոցոտումէն թմրած իր հոգիին յիշեցնէր թէ օրուան մը պարտութեան փոխարէն որչա՛փ յաղթանակներ տարած էր այդ երկիրը, և թէ հետեւաբար որչա՛փ յոյս կրնար դնել վաղորդայնին վրայ: Պա՛հ մը Հանրի տը Պօռնիէ եղած է այդ մարդը, և իր գործին դրամած ընդունելութիւնը բացատրելու համար կը բաւէ յիշատակել թէ նոյն իսկ օր մը, Լա Ֆիյ սը Ռօլանի մէկ ներկայացումէն վերջ, ժողովուրդը զինքը ուսերուն վրայ դուրս հանած է թատրոնէն:

1870էն առաջ գրուած, այդ գործը, իր երկրորդական հանգամանքով ոչ մէկ բանի պիտի ծառայէր: Ատոր համար արդէն քանիցս մերժուած է: Բայց պարտութիւնը զայն պէտք մը դարձուցած էր ժողովուրդին համար, և ոչ ոք ուղած էր հաւատալ թէ Տը Պոռնիէ զայն պատերազմէն առաջ գրած է: Հէքեաթը կը մնար այդպէս, ու թերեւս շատերու համար այսօր միայն կը յայտնուի ճշմարտութիւնը:

Այդ խաղին մէջն ալ Տը Պոռնիէ իր սովորական ուղղութենէն չէ չեղած: Ոչ մէկ տող կարելի է գտնել արտասովոր կիրքի մը, զգայնութեան մը, առաքինութեան աղարտ բերող դրուագի մը պատկերացման նուիրում: Կիններու ձեռքը մեծցած, կնոջական դաստիարակութեամբ մը սնած, բնականաբար չպիտի կրնար տարբեր գրոշմ մը տալ իր գործին: Ռօլանի բանախօսութեան մէկ զմայլելի հատուածը ուրիշ ամէն բանէ աւելի կրնայ պատկերացնել այդ գործը՝ իր բոլոր մասնայատկութիւններով: Նկարագրած է անոր ծնած գիշերը, Ծնունդի գիշեր մը, 1825ին: Մինչդեռ մայրը իր երկունքի ցաւովը կը կոտտայ, պատուհանը կը բանան և տան դէմը դանուող եկեղեցիէն կը սկսին լսուիլ մեղեդիներ, աղու մաքուր ձայներով՝ որոնք աստուածային մանուկին փառաբանանքը կ'երգեն երգեհոնի ընկերակցութեամբ:

գութ, հաւատք, քրիստոնէական բանաստեղծութիւն՝ բուրվառներու ծուխին հետ ներս կը խուժեն բայց պատուհանէն, ունորածինը կը չնչէ այդ ամէնը՝ օդի առաջին ուռնային հետ:

Կարելի չէ լաւագոյն կերպով մը պատկերացնել Հանրի տը Պօռնիէի հոգին:

* * *

Ռօսթան՝ իր գործին բնոյթով շատ կը մօտի Տը Պօռնիէի, բայց այդ մերձեցումը աւելի կը նպաստէ զգացնելու այն տարբերութիւնները, — յաճախ հիմնական, — որոնք զոյգութիւն ունին իրենց խառնուածքին, իրենց տաղանդին ու արտադրութեանց մէջ: Ռօսթան իր վրաւոր պարագաներու չի պարտիր. տակաւին հաղիւ ոտանաւորի հատոր մը և չորս հինգ կտոր թատերախաղ հեղինակած, իր նախորդէն չա՛տ աւելի արժանիք ցոյց տուած է, և որչա՛ի ալ կանխաճառ երեւայ Անմահներու Եթովի մը տիրացումը, ապահովաբար ո՛ր եւ է Հանրի տը Պօռնիէի մը անհունապէս աւելի իրաւունք ունի Ակադեմիի շնորհներուն արժանանալու: Ուրիշ բան՝ եթէ իրմէ աւելի արժանաւորներ տակաւին այդ փառքին չեն հասած: Իր գործը դերծ է պայմանադրականութենէ, և հետեւաբար տախտակութենէ: Վառվռուն, պճրտող շունչ մը կայ անոր մէջ որ կը թովէ՝ երբեմն զըւարթութիւն, երբեմն թախիծ առթելով. և անկարելի է այդ շունչին դիմադրել: Սովորական, փթացած զգայնութիւններու նոր եւրաններ տալ, եւ անոնցմով տարբեր յուզում մը առթել, ապահովաբար պզտիկ գործ մը չէ, և Ռօսթան, իբր արուեստագէտ, երբեք չպիտի կրնայ յաւակնիլ ատիկա գերազանցող յատկութեամբ մը: Չունի նաեւ այն թերութիւնը, — չախապաշարումը, — որ ճակատադրային դատապարտութիւն մը դարձած է Տը Պօռնիէի գործերուն համար, և անոնցմէ մեծագոյն մասը խղաննած է ձուլի վիճակին մէջ: Յետոյ իր նախորդէն շատ աւելի տէր է ոտանաւորի արուեստին, ու մանաւանդ չա՛տ աւելի ատակ մարդկային հոգիին ճանաչողութեան: Անոր նախասիրութիւններէն, անոր տկար ու դիւրագրգիւ կողմերէն

ոչ մէկը անձանօթ է իրեն, և իր ջանքը այդ կողմերուն դէմ կ'ուղղէ, իր արուեստին ամէնէն զօրաւոր թափովը կը յարձակի՝ անոնց վրայ, կը գերէ, և յետոյ ուղածին պէս կ'ուղբարկէ, կը չարչարէ կամ կը հրճուեցնէ: Իեմը որուն վրայ սիրտի ներկայացումին իր գործերը, գաղտնիք մը չունի իրեն համար: Մարդոց հոգիին ծանօթ, անոր դիւրայոյզ և զգայուն կողմերուն տեղեակ, գիտէ՛նաե թէ ի՛նչ բան բեմին վրայէն ամէնէն աւելի կը նպաստէ այդ յուզմունքն ու զգայնութիւնը գոյացնելու: Երբեմն միակ բառ մըն է ատիկա, երբեմն հառաչ մը, երբեմն ամբողջ տեսարան մը որ խաղին մնացեալ մասերուն քով հսկայ գիծեր կը ստանայ և կ'որոշուի՝ իբր տիտանի դրուագում մը: Ու տակաւին չեմ ուզեր յիշատակել իր սրամտութիւնը, որ բոլոր գործերուն մէկ ծայրէն միւսը կը թեւածի, յաճախ յոգնեցնելու աստիճան յորդ ու տեւական, ինչպէս նաեւ իր հարուստ և ազնիւ զգայնութիւնը լաւագոյն կերպով և լաւագոյն բառերով արտայայտելու կարողութիւնը որ կրնայ անգնահատելի նկատուիլ:

Ասոնք իր յատկութիւններն են: Բայց բաղդն ալ քիչ չէ նպաստած իրեն՝ եթէ զըրականութեան ամէնէն դժուարին ճիւղերէն մէկուն մէջ կրցած է այս ատոման մեծ, զըրեթէ համաշխարհային համբաւ մը չահիլ, տարիներու ո՛չ շատ երկար չըջանի մը դնութացքին: Բանաստեղծ հօր մը և բանաստեղծութեան սիրահար ընտանիքի մը զաւակ, բնաւ արգելք մը չէ գտած իր նախասիրութեանց դէմ: Իր ընկերային դիրքն ու վիճակը սկսնակի դժուարութիւնները չեն ճանչցուցած իրեն: Ընդհակառակը, ճամբան հարթ, յղկուած դատած է իր առջին, ու կարծես բընաւ չէ՛ յոգնած, չէ՛ աշխատած այդ համբաւին տիրանալու համար: Բաղդը ձեռքէն բռնած ու զինքը առաջնորդած է միշտ այն տեղերը որոնց մէջ ամէնէն աւելի հաւանաւորութիւն կայ փայլելու, համբաւուելու, սիրուելու և աստուածացուելու, և ասիկա հաւասարապէս թէ՛ գրական և թէ՛ անհատական կեանքին մէջ: Զմայելի կին մը՝ բանաստեղծ իրեն պէս, ընտանեկան շատ ներգաշակ ու սիրուն միութիւն մը, անսպելատ

ալաբերութիւններ, օրուան ամէնէն ազդեցիկ մարդոց բարեկամութիւնը, քննադատութեան համակրութիւնը, և Սառա Պէննարի, Քօք լէնի ու Կիթոնի պէս թատրոնի աստուածներ՝ իր խաղերը բեմի վրայ հանելու համար։ Բարիզի պէս ոտանի մը մէջ ուր յաջողիւր չատ դժուար է յաճախ, ուր Վիլիէ տը լ'Իլ Ատաններ, Սթանդալներ, Վէրլէններ, Հանրի Պէքեր ուրիշ այնչափ բարձր միաբերու հետ գրեթէ անօթի ապրած են, այդ առաւելութիւնները վեր կը մնան ամէն գնահատումէ։

Այդ բազդը շատեր Ռօսթանի երեսին տուած են, ինչպէս տալին այս օրերս ալ, ահագեմական ընդունելութեան առթիւ։ Նորագոյն դրողները մանաւանդ, որոնք բանաստեղծութեան պատկանող խնդիրներու մէջ կատարեալ անդրադառնականութիւն մը ցոյց կուտան, և որոնք մինչեւ զուտ բանաստեղծութեան յատուկ հանդէսներ հիմնելու չափ առաջ դացած են, բացարձակապէս կ'արհամարհեն իր դործը, և յաջողութիւնը զոր դուած է, փառքը որուն մէջ կը լողայ, մի' միայն բազդաւորութեան և անձնական յարաբերութիւններու կը վերադրեն։ Ռօսթանի իրենց համար միջակ բանաստեղծ մըն է, արուեստի ամէն առանձնայատկութեանց անստեղեակ, տեսակ մը հասարակ երկաթագործ որ իր միտած, կոշկու կապած ձեռքներով կը յաւանքի ոտանաւորներ դարձնել, մինչդեռ ոսկերչի մը նուրբ հիւստած քներու վարժ մասները պէտք են ատոր համար։ Մինչեւ իսկ կ'ուրանան իր թատերադրի յատկութիւնը, որ հակառակ քննադատութեան կողմէ մատնանիջ եղած քանի մը թերութիւններու, պարզապէս անվիճելի է։

Բարերազգաբար Ֆրանսական դրականութեան մէջ վճիռը նորագոյններուն չի մնար։ Այլապէս, Ռօսթանի հետ որչափ համըսուած գրչի իշխաններ՝ Հիւկոյէն, Զոլայէն սկսեալ մինչեւ Պոլանթիէ և Ժան Լօռէն իրր արհամարհելի պատուելիքներ պիտի ներկայացուէին, զուրկ ամէն յատկութենէ, արժանիքով ոչինչ, համըսուով դող, տաղանդով միջակ և կամ հասարակ։ Ահլին լուրջ, ան-

կողմնակալ քննադատութիւնը կայ. կան մանաւանդ քանի մը շատ զմայլելի քննադատներ որոնց դատողութիւնը մեծ կշիռ մը կ'ունենայ միշտ, և որոնցմէ նոյն իսկ մէկ հատին հոգ չէ թէ աննուղական հակադրեցութիւնը կը բաւէ բոլոր նորագոյններուն պօռտախօսութիւնները ոչնչացնելու։

ՄԷԲՐԵՏԻՍ

ՆՈՒԻՐԱԿԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

“ԵՂՐԴՈՒՏԻ ՎԱՆՔ,Ը

Բ.

Եղրդուտէն զատ՝ կոչուած է նաև «Վանք Շիշ-իւղոյ» ամենահին չիլին անուանով։ «Շիշ-իւղոյ» մինչեւ յարդ պահուած կը մնայ վանքի տաճարում, մասնաւորապէս մը մէջ երկու փեղկէ արծաթ կաղապարով։ Շիշ մութ-կանանչ գոյն մը ունի, հիները՝ մեռուազոյն ալ ըսած են, օրհնութեան իւղ կամ միւռոն պարունակած ըլլալուն համար։

Վանքին մէջ կը գտնուի մագաղաթեայ հին կոնդակ մը, զոր կ'անուանեն «Լուսաւորչի Կոնդակ» անուշտ թիւրիմացութեամբ։ Կոնդակը գրուած է 1445ին՝ Տ. Գրիգոր Մալուիցի Կաթողիկոսէն և նորոգուած 1588ին։ Այս ձեռագիրը և թէ ուրիշ աւանդութիւններ անսահման հնութիւն մը կ'ընծայեն օրհնեալ իւղոյ չիլին, ըսելով թէ «Այս այն չիլն է, որով Մովսէս օձեց նահապետները, Սամուէլ՝ զԴաւիթ Մարգարէն և կիսն պոռնիկ Մարիամ Մաղթաղենացի՝ զՅիսուս։ (Մատթ. Ի. 2. Է), զոր բերեալ էր Ս. Առաքեալն Թագէոս և ապա՝ ձեռամբ Սրբոյն Գրիգորի չինեալ էր եկեղեցին սահկաւեհն, որ է սահկաւեհն, վասն որոյ վերածախի մենաստանս—Շիշիւղոյ վանք, գրեալ ի լիակատար պատմագիրս և ի Միքայէլ Ասորի ևս գրեալ կայ»։

Արգարեւ ադ չիլը՝ իր կազմածով՝ վաղեմի հնութեան մը դրոշմը կը կրէ։ Կը հուսատեն թէ՝ օտար հախոյղներ իսկ համարած են զայն իրր Փլունիկեան ձեռագործ մը, ու՝ ամէն պարագային հաստատած են անոր

հնութիւնը : Այս նուիրական հոսանքը՝ շատ զգուշութեամբ կը պահուի տաճարին մէջ, ուրիշ երբեք դուրս չի հանուիր : Եւ թէպէտ անգամ մը վտանգի ենթարկուած, բայց ձեռք բերուած է, ու կը հանգչի իր նորոգուած տուփին մէջ :

ԱՐԺՈՒԱՐԵՐ Ս. ՆՇԱՆ

Հիմայ դանք Արծուաբերին՝ մամիկիս սիրած ու սրտանց պաշտած Ս. Խաչին : Եղբր-դուտի Ս. Յովհաննու վանքը յիշուած է հետեւեալ աւանդութեան համաձայն, նաեւ «Վանք Արծուաբեր Ս. Աստուածածնի»

Ժամանակին՝ վանքը ունեցեր է բազմամեայ՝ բայց օտարական ու պարզամիտ սպասաւոր մը, որ իր հաւատարմութեամբ ու դրաւած վստահութեամբ եկեղեցիի մէջ ալ անադիւ ելեւմուտ կ'ունենայ : Օր մը՝ այս սպասաւորը կը տեսնէ որ Միաբանութիւնը մեծ հանդիսութեամբ պահարանէն կը հանէ ոսկեհոռ դարդարանքներով պալուղուած՝ մետաքսահիւս շուշպաներով ծածկուած՝ ոսկըրձրած-արծաթի տփիկ մը (ուր պահուած կը մնար խաչափայտին մէկ կարեւոր նշխարը՝ զոր բերած է հոն Ս. Թադէոս Առաքեալը) ու սաստիկ հետաքրքրութիւն մը կ'ունենայ, մտածելով թէ՝ անպատճառ խիստ մեծագին բան մը ծածկուած ըլլալու է անոր մէջ, որ Հայերը ա'յնքան յարգ կ'ընծայեն, խուսկ կը ծինեն ու մոմեր կը վառեն առջեւ : Կ'որոշէ դողնալ այդ դանձը և հեռանալ : Առաւօտ մը արշալուսէ յառաջ՝ եկեղեցիի դուռը բաց դնելով՝ ներս կը սողոսկի, ու կենաց փայտը՝ իր դարդերով պահարանէն կը հանէ, ու լաթերու մէջ ծածկելով դուրս կ'ելնէ : Տունը երթալու պատրուակով նոյն օրը կը մեկնի վանքէն մեծագին դանձն ալ հետը...

Օտարականին գիւղը շատ հեռու չէր վանքէն. նա կը համարէ հոն այն ժողովը, երբ որ թոնիրները սկսեի էին՝ վառուիլ : Իր տան դրան դէմ կը պատահի կնոջը, որ տխրադէմ ու մտածկոտ կեցած էր բակին մէջ : «Կնի'կ, Աստուած խեղ ընէ, ի՞նչ ունիս արդեօք» : — «Ի՞նչ ունիմ, գիշերը վատ երազներ տեսայ, առաւօտնէ ի վեր ալ ուշքս մնացեր է սա արծիւին վրայ (ձեռքով ցուցնելով) որ ան-

դադար մեր տան վրայէն կը դառնայ, կարծես թէ բան մը կորսնցուցած ըլլայ : Ես գիտեմ որ աղէկ նշան մը չէ...» : — «Հէյ, Աստուած խելքդ առնէ. խէ'ր է խէ'ր, հէլէ ներս եկուր տե'ս ի՞նչ դանձ եմ բերեր» :

Տունը կը մտնեն : Վառման թոնիրին կուշտը՝ անհամբերութեամբ կը սկսի քակել նուիրական տուփը : Կինը և երկու զաւակները, որոնք իր բոլորտիքը առած՝ զարմանքով կը դիտէին ոսկեհոռ ծածկոցները, կը սկսին աւմէն մէկն իրեն քնշել զարդերը, շուշպաները : Երբ սպասաւորը ոսկէ պատեանն ալ կը բանայ, ի՞նչ տեսնէ սակայն արմնցած—փայտի կտորիկ մը...

—Վայ, իրաւ անխելք են եղեր սա մաթրանները, ի՞նչ ա'նպէտ բան, կը բացադանէ, ու խաչափայտին կտորը բռնելով հերսոտմանց թոնիրին մէջ կը ձգէ : Կը ձգէ թէ ոչ, թոնիրը կը կատղի, կրակը կ'արծարծի ու բոցը կը բռնէ անոր տնակը, ա'յնքան արագօրէն, որ հազիւ ինքն ու կնիկը դուրս կը թռնեն. տունը կ'այրի, կը մռուղի դաւկներով միասին...

Իսկ խաչը—թէ եւ քիչ ծխոտած, բայց առանց վնասի թոնիրէն թռչելով կը նստի փայտէ սիւնի գլխուն վրայ, որուն կրակը կը մարի անմիջապէս, փայտը փայտի վրայ, փայտը կրակին մէջ ու չեն վառիր...

Արծիւը դեռ կը սաւառնէր կամհրեշտակը դեռ կը ճախրէր այրեցաւեր տան վրայէն, օտարականին կինը՝ մաղերը փետտելով՝ դռնէ դուռ ինկած էր և գեղացւոց կը պատմէր ոսկեպատենիկ սուրբ փայտին հրաշքը և իր չարագուշակ երազները, մինչ սպասաւորն ալ հող ցանած գլխուն՝ կ'ողբար իր անմտութիւնը և կորուստը...

Բոլոր գեղը ոտքի վրայ էր, ու եկեր լցուեր էին մրկած տան չորսդին, և ահա արծիւ հրեշտակը պանալով իջաւ դէպ ի սիւնը և կոցելով Ս. Նշանը, առաւ, տարաւ վանքը ու հանգչեցուց Եղբր-դուտի ծառին վրայ : Այն օրէն սկսեալ Ս. Մասունքը կոչուեցաւ Արծուաբեր Ս. Նշան :

Այս բաները կ'անցնէին կը դառնային. քանի մը օրեր ալ կը սահէին, սակայն Միա-

բանութիւնը դեռ չէր կռահած խաչին կո-
րուստը: Երբ որ ննջեցեալի մը պատճառով
Ս. Խաչը դուրս հանել պէտք կ'ըլլայ ու պա-
հարանը սարսաղ կը դռնեն, Միաբանութիւնը
տախտակաւ կ'ըլլայ, կը խռովի, կը վեր-
դառնայ, ասդին, անդին կ'ինկնան, ու խաչը
չերեւիր: Բոլոր միաբանութիւնը անակարգ-
րելի յուզումով մը կը լեցուի, ազօթք—հըս-
կումի կը դիմեն ու գիշեր մը՝ իրողութիւնը
վանահօր կը յայտնուի երազին մէջ: Առտուն՝
այդուն դէպ Նըղզուտ դիմելով կը տեսնէ
թեւատարած արծիւը Նըղզուտի վրան:


Խնկօֆ, մոսեղիքօֆ և համդիսիւ հոգեւո-
րական հոն կը վազեն վանք—վանատուն ու
Ս. Խաչը կ'ընդունին արծիւ—հրեշտակէն: Ըն-
կուզի պատեան և արծաթ տփիկ կը չինեն ու
կը տանին կը հանգչեցնեն իր պահարանին
մէջ, որ պատրաստուած էր Ս. Լուսաւորչին
կարգադրութեամբ: Նոյն օրը տօնական օր
մը կը դառնայ վանքին համար—և մասնաւոր
հանդիսաւորութիւն Արծուաբեր Ս. Նշանին:
Վանքին մօտակայ գեղ մը կայ, Գըղըլ—խաչ,
արդեօք անոր համար չէ՞ որ կոչուած է կար-
միր խաչ, և այս աւանդութիւնը արդեօք չի՞
համեմատիր Գլակայ վանքէն գողցուած ու
Յիծեռնոյ վանքը տարուած կենաց վայտ Ս.
Նշանի գողութեան հետ, որ պատահած է Տ.
Ներսէս շինող Կաթողիկոսին օրով՝ 650—60
ինչպէս կը դրէ Գլակայ վանահայր մատենա-
գիր Տ. Յովհաննէս Եպիսկոպոս իբր ակնա-
տես և ժամանակակից:

Յիծեռնոյ վանքն, այժմ աւերակ, աւերի
մօտ է Նըղզուտի վանքին, որոնք մի և նոյն
լեւնաշղթայի վրայ են:

Արծուաբերը միշտ մնաց ու կը մնայ մեր
բարեկրօն ժողովրդեան համար—նշան նուր-
ական ու հրաշագործ և Գանձ Աստուածա-
պարգև, որ անկողնուպալի կը համարուի և
ինչ հանգամանաց ներքեւ հեռացուի, Արծիւ
—հրեշտակը պատրաստ է զայն վերադարձը-
նելու իր սիրական Նըղզուտ ծառին դադա-
թը...

Գ.Ե.ՂԱՍՄ

ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԻ



Վաղը, տօն Կաթողիկէի, որ միան-
գամայն Ս. Էջմիածնի հաստատման 1600 աւ-
նայ յորեւեանն է, Ս. Պատրիարքը Մայր Ե-
կեղեցւոյ մէջ և քարոզիչ եպիսկոպոսներն ու
վարդապետները իրենց եկեղեցիներուն մէջ
հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանեն
և քարոզ խօսին: Կրօնային այս մեծ տօնին
առթիւ, Մասիսի նախորդ և այս թի-
ւերով հրատարակեցինք Գեղամի «Նուիրական
աւանդութիւններ»ը որ, գաւառային դրա-
կանութեան սքանչելի էջ մը ներկայացնելէ
զատ՝ այժմէութիւն մը ունի, խնկաբոյր բա-
րեպաշտութեամբ մը պարուրուած:

ՀԱՐՈԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԻՍ

Երկուշաբթի օրը, Գատըգիւղի Ս. Թա-
գաւոր եկեղեցիին մէջ կատարուեցաւ Մկր-
տիչ էջի Ս. Մանուկեանի պսակադրութիւնը
Օր. Եւգինէ Արագեանի հետ, կնքահայրու-
թեամբ փեսին իղձօր՝ Բարսեղ էջի. Մանու-
կեանի: Արարողութեանց կը նախադասէր Ե-
րուսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Գէորգ
Եպիսկ. Երէցեան, չըջապատուած վարդա-
պետներէ ու քահանաներէ: Պսակի արարու-
ղութենէն ետքը, Հնորհաւորութիւններ եղան
Մանուկեանց բնակարանին մէջ, և նոյն իրի-
կունը նորապսակ ամուր Ներսիս ուղեւորե-
ցաւ ուր սլտի մնաց քանի մը ամիս:

Մկրտիչ էջի Մանուկեան ո'չ միայն ա-
ռեւտրական հրապարակին վրայ յարգուած
դիրք մը ունի, այլ նաեւ ազգ. պաշտօններու
մէջ իր մատուցած օգտակար ծառայութիւն-
ներովը՝ ծանօթ ու սիրուած դէմք մըն է, և
իր կեանքի ընկերուհին՝ բնածին աղնիւ յառ-
կութեանց կը միացնէ խնամուած դաստիա-
րակութեան մը առաւելութիւնները: Մեր
ջերմագին խնդակցութիւններն ու Հնորհաւո-
րութիւնները կ'ուղղենք Տ. և Տիկին Մ.
Մանուկեանի՝ իրենց բարեբաւտիկ ամուսնու-
թեան առթիւ:

Մասիսի նախորդ թիւով հրատարակուած՝
Զիֆթէ—Սարաֆի «Հարցում մը» յօդուածին
մէջ, էջ 344, Բ. սիւնակ, Ա. տողի «լու-
սացողակ» բառը պէտք էր ըլլար «լուացո-
ղակ» և Ա. Զրաքեանի «Բաժնուած սիրտեր»
ոտամատորին մէջ, էջ 346, 16րդ տողի «ա-
չերուն» բառը «ալեւուն»:

ՔԱԺՆՈՒԹԱԾ ՍԽԲՏԵՐ



(Գ. ՄԲՅՕ.ՆԱ.)

I.

Քեզմէ՝ սորվեցայ ես առջի անգամ,
Քէ ինչ է սիրոյ հմայքն անխրոով .
Ու անոր համար ես միշտ կը խոկամ,
Քեզ հոգիիս պէս՝ ներսէն սիրելով :

Երբ ես տակաւին անգիտակ էի
Կոյր ըզմաններուդ, խօլ բայց տարակայ,
Ո՛չ, չէի յիշեր ես այսքան քեզի,
Զի սիրոյ «ինչո՛ւ»ն, հիմա սորվեցայ :

Ու յափտակուած, քաղծութեամբ խորին,
Քու աղուոր դէմքիդ, հրայրքիդ անեղ
Սարսուռն ըզգացի. նուրբը եթերին,
Դաւնակը արտիս, ես տեսայ քու մեջ :

Բոլոր երգերուս անգոյ դիցունքին
Դո՛ւն ըլլալու ես. ըզքեզ կը պաշտէմ...
Զի արտիս ընկեր, սերը հետեւադին,
Դո՛ւն կրնաս ըլլալ, բոցեղ, ժպտադէմ :

Նոր անուրջներուս ոսկեյեռ սնդուս,
Պարիկն ըրած եմ ըզքեզ մտերիմ .
Ու ասոր համար ամեն տեսնելուս,
Երազներուս մեջ ըլլալ կը քուիմ :

Դո՛ւն սորվեցուցիր մաքուր սերերուն
Հետեւութիւնն անծիր, կախարդիչ, աղուոր,
Հոգիս եթերն է, աննիւթ, ասմազուն
Սերըդ հոլաքել՝ քոչունը անոր :

Ու անյուսութեան ժամերուս, լանկարծ
Քեզի պիտի գամ դէմքով սիրուածի .
Ու մազերուդ մեջ գլուխքս քաղած,
Տղու ցաւերքս պիտի լամ քեզի...

II.

Առջի վեպս է ան, անուշ, հետեւոր,
Քու ցրացումիդ յուզմունքէն հեռի,
Առջի երգերս են, ամենքն ալ բոլոր,
Սիրազելովմի հասցումովն առլի :

III.

Փոխուած չեմ սակայն, դեռ կը սիրեմ քեզ .

Ձի սիրոյ «խնչո՛ւ»ն քեզմէ՛ ստրկեցայ .

Յուսեցերուս մեջէն, տեղոս հոգիս ,

Մի՛ կարծե՛ր քե քեզ կ'ասեմ ես հիմայ :

Ես շատնց արդէն կը զգայի քե դուն ,

Պիտի բաժնուիս ինձմէ վերջապէս .

Բայց պատշաճութիւն մեջ, — նիւնա՛ծ քե արթուն , —

Քիչ մը գիտի քե զիս կը սիրես :

Պատմութիւնն է աս կեանքներուս , պատիւ ,

Ծոյլ պատճառներով , յոյսերով տարած ,

Ու չի լմնար , գիրքը չի՛ հասնիր .

Ձգեցիր գացիր , մինչ ես կը կարդամ . . . :

Մ. Ս. ՊԱՐՍՍՍՅԱՆ

Բերա

Վ.ԲՈՂԱՆՍՅԱՆ

ՇԱՏՈՒՆ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ամայի և հովանաւ ծառուղիէն , իրիկ-
նամուտի իր ստորական ճամբով շարժուելով , որ
դիւղին ծայրը կ'երկնար , Արաքսի կ'անցնէր
հովի պէս :

Իր սվեղ ու մարմնեղ հասակը կը դիւ-
րաթեքէր , սօսկներու շուքին տակ , մեքե-
նական քաղաւածքի մը անգլիական յոգնու-
թիւնն երևում : Ու երբեք , երբեք սթափածի
նման , նպատակի մը դիմելու երեւոյթը կ'առ-
նէր ան :

Պարզ էր արդուդարդը , բայց ազնիւ դը-
րոշմով մը տողորուած . մութ դոյնները կը
սիրէր ան : Պտոյտի հագուստ մը , գրեթէ
միշտ նոյնը , որ զօռեղ արտայայտութեամբ
մը կը կեղծէր այդ կնոջ զգայնիկ լինելու
թիւնը :

Հազիւ երսուն տարեկան կար . սեւ մա-
զեր ու սեւ աչքեր , շուշանաթոյր մորթի մը
վրայ ստուերազծուած . աղնուական գեղեցի-
կութիւն մը՝ որ ենթացէ կ'ընէր էն անպատ-
կառ նայուածքներուն խոյն :

Անուշաղիւր , կարեւոր մտասեւեռ , կը սա-

հէր համաշափ քայլերով , երբ աղքատ
գնչուհիի մը լալկան մոլորութիւնը յամրացուց
իր գնացքը :

— Աղուոր տիկին , Աստուած սիրականիդ
հասցնէ քեզ . . . :

Դողով մը կեցաւ Արաքսի , իր մարմնեղ
աշուրները այդ խղճալի էակին վրայ յառե-
լէն՝ ձեռքը անդալաքար պարզութեամբ հեռ-
քովընտի կախուած ոսկեթել քսակին տարաւ :

Մութացուհին կը շարունակէր իր աղեր-
սանքը :

— Բայց ինչէ՞ն գիտես որ ես սիրական մը
ունիմ , հօծեց Արաքսի՝ արտաւթեան մէջ
թաթխուած զարմացկոտ նայուածքը վեր առ-
նելով յանկարծ :

— Օ՛հ , եթէ ձեզի պէս աղուոր տիկին մը ,
ձեզի պէս հարուստ տիկին մը չի սիրէ . . . ,
պատասխանեց համարձակ՝ իր աղատած ճը-
մութեամբ գէտքը հակառակով իր մաքուր
ակունքներուն փղտկոյնին հետ :

— Ու եթէ անկարելի ըլլայ մալիքանքդ
այս աշխարհի մէջ , հօծեց դառնութեամբ
Արաքսի , տխուր ու միամիտ նայուածքը դա-
մնելով դեպի ինքն :

— Այն ատեն , վրայ բերաւ միւսը՝ շուա-
րած , այն ատեն . . . :

— Այն ատեն , անդիւր աշխարհի մէջ ,

հէ՞... ընդմիջեց ան, աչքը արցունքի չի-
թով մը փալփուռն, և աղքատին կոչիւցած
կեղտոտ աիւրն մէջ դնելով արծաթ դրամ մը:

— Ի՞նչ դժբախտ կին՝ այդ բարի տիկինը,
միմեջեց գնչուհին, երբ արդէն ան կը շարու-
նակէր ընթացքը:

Հաղիւ քանի մը քայլ հեռացած էր Արաք-
սի, դրաւ ուսած այդ վրդովիչ խօսքերէն, ու
բացադանչեց հիւանդ հոգիի մը մեղամաղձո-
տութեամբ:

— Երանելի՛ կին...:

Ու երկու կիները հեռացան, մին դէպի
յառաջ, ծառուղիին դէպ ի ծայրը, առանց
նպատակի, անկարելի երազին մէջ թափա-
ռայած, վաղուան տարակոյսէն վարակուած
ախտաւոր, և միւսը յաջող օրուան մը իրի-
կունը ըմբռնելէն, հապճեպելով զուարթօ-
րէն դէպի մերձաւոր վրանը, ուր բոսիկ ու
անլարտի լաճերը կը սպասէին իրենց մօրկան:

* * *

Երբ Արաքսի այրի մնաց, իր սիրտին պա-
րագութենէն սարսափեցաւ: Սէրը իրեն հա-
մար ամէն բան էր, և կ'ուզէր կամաց կամաց
հասնիլ անոր և քիչ քիչ զգալ անոր տիրա-
պետումը, աւելի լաւ վայելելու համար այդ
երջանկութիւնը: Բայց իր ամուսինը, առջի
օրէն հիւանդ մը, իրեն հետ հոգեբ միայն
բերած էր այդ հիւանալի կնոջ, այնպէս որ
Արաքսի, դեռ սէրը չի ճանչցած, հաղիւ թէ
կուհած ան, համոզուած էր թէ կեանքը
պարտքի հատուցումն է միայն, և այս յու-
սախաբութեան մէջ տարուբեր, յաճախ զգա-
ցած էր թէ իր հոգին կը մսէր:

Սեւերուն մէջ պարուրուած իր մարմինը
զգլխի կորութիւններով կը շրջագծուէր, և
հակումներէն ու վշտակրանքէն փոսացած
էր նշաձև սեւ աչուրներուն վհկութիւնը ի-
րերուն և հոգիներուն վրայ հոսելէն, հա-
մակրանքի տաք շունչ մթնոլորտ մը կը ստեղ-
ծեր ինք իր շուրջը: Իր ճակտին վրայ երազի
մը շէջքը և իր շուրթներուն ծայրը ժպտումի
մը ծալքը կը տխրէին: Կեանքը արհամարհե-
լու ծեսդ մը ունէր ինչ որ կուտար իրեն
ազնուատիպ շահեկանութիւն մը: Դեռ չի
թղթառնած գիրքն էր, որուն էջերը բաց-

ուած էին արդէն, բայց ուր ոչինչ կարդաց-
ուած էր տակաւին:

Արաքսի ունէր մէկ խօսքով այն ամէն
թաքուն և խորունկ չեմ գիտեր ինչը, ան-
շուարիւի, շատ մտերիմ, ու շատ նրբազդե-
ցիկ, որ Լեւոնի պէս ռափքնէ երիտասարդի
մը յափրացած սիրտը կրնային վրդովել:

Միեւնոյն շրջանակին մէջ ապրած երկուքն
ալ, միշտ իրարու հանդիպած էին անոնք:

Լեւոն, կարեւոր վարչութեան մը մէջ
պաշտօնեայ, լուրջ ու դժուարահաճ երիտա-
սարդ մըն էր. շատ քիչ բարեկամներ ունէր.
անոր համար հպարտի տեղ անցած էր:

Ամէն տեղ չէր, ամէնուն հետ չէր, ինչ-
պէս իր զիրքին տէր երիտասարդներէն շա-
տերը՝ որ երեւալու համար կը պատուաւին:
Ան իր արժանիքին որոշ գիտակցութիւնը ու-
նէր, բայց ամբարտաւան չէր բնաւ: Իրեն հա-
մար գերագոյն հաճոյքը գրականութիւնն էր.
շատ կը կարդար. ու մէկ երկու հեղ հրա-
պարակ իջած էր «Գիտանոր» ծածկանունին
տակ և ուշադրութիւն գրաւած:

* * *

Երբ առաջին անգամ, մեծ սուգին մէջ,
Լեւոն տեսաւ Արաքսին, տարօրինակ ցնցում
մը զգաց զոր մէկէն իմէկ չի գիտցաւ յայտո-
րուել:

Այդ կնոջ կրած կորուստը, ցաւատանջ
կենցաղը, վշտակիր հոգին, տեղւոնած դէմ-
քին դողար արտայայտութիւնը, ամէն ինչ,
իր պարզութիւնը, և իր մէն մի բառը, զրա-
զեցուցին Լեւոնը: Գերեզմանի մը խորը նա-
յած էին այդ աչուրները, և հիմակ աւելի
աղուոր էին անոնք, որովհետեւ հիւանդ կը
թուէին:

Երբոր իրարմէ բաժնուեցան, Լեւոն իր
կրած տպաւորութիւնը տարրալուծեց, ու եր-
կար ատեն թաղուած մնաց հաճելի մտածում-
ներու մէջ: Վաղուան անուշ երազը հիւսեց:

Իր զգայուն սիրտը շատ բանաստեղծու-
թիւն ունէր, և իր հոգեբանութիւնը ինքը
շատ հեռուները մոլորեցուց: Կարծեց պահ
մը, և ցանկաց իսկ սիրել այդ շնորհազեղ
կինը: Սիրել այդ կինը, կեանքի այնքան
պատրանքներէն վերջ, հասնելու համար սի-

րոյ լաւագոյն ըմբռնումին, երազին քողերը վեր առնելու համար, ապրելու համար մէկ վայրկեանը որուն յաւիտենականութիւնն է միակ երջանկութիւնը՝ զոր միամիտները այլուր կը փնտռեն յաճախ:

Մէկանց յափշտակուած, որպէս թէ առաջնաց բնաւ տեսած չըլլար այդ կինը, Լեւոն կ'ապրէր ամէն օր միեւնոյն անգեցեցութեան տակ՝ միշտ վառ ու միշտ նոր: Իր միտքը կը վերադառնար այդ սիւսքեկէ դէմքին. կը յիշէր այդ մեղկ ու երկար նայուածքը՝ որուն մէջ արցունք մը կը բանաստեղծէր. իր մէջ մի ժեպը որուն մէջ իր ազնիւ հոգին կը թալկանար, իւրաքանչիւր խօսքը, երգ մը իր մարդրիտ ակօսանքներուն մարգարտաշարին վրայ և բոյր մը իր բուստ շուրթերուն վարդին վրայ, իւրաքանչիւրը դեռ կը կրկնէր Լեւոնին խոտալարակ հոգիին մէջ այդ կնոջ հմայաթափ սիրտին սիրելու հրաւերը:

Երկար ատեն տեւեց այդ ինքնամոխոխումը ու ա՛յլ կը սիրէր Լեւոն. չի կրցաւ այլ եւս խորհիլ ինքզինքը. և այս իրողութիւնը վերացուց ինքը:

Դեղերեցաւ անոր շուրջը, փնտռեց անոր հետքերը, յաճախեց միեւնոյն շրջանակը, առիթներ ստեղծեց. ու վերջապէս բացաւ իր սիրտը՝ երկարատեւ դարպասէ մը վերջ, երբ այլ եւս իր բնածին խորթութիւնը տեղի տուաւ սիրոյ պայքարին:

Արաքսի անդրդուելի կը մնար իր անտարբերութեան մէջ, միշտ բարձր ու միշտ անմատոյց:

Իրեն համար Լեւոնը առաջինը չէր, և ոչ ալ վերջինը, այն տախտէրներու վոհմակին որ իրենց խարդախուած զգացումները իր ոտքերուն տակ կը դնէին: Գիտէր թէ գեղանի էր և դրախչ, և եթէ բնական կը գտնէր որ յանկային իրեն, բայց չէր ներեր ինքզինքին որ թեթեալար տեղի տայ:

Մանաւանդ գեւեհիկ ըլլալու վախը ունէր, ինք կը բաղձար տէրը մնալ իր սիրտին. իրեն համար կինը իրաւունք ունէր իր սիրտին ուղածը սիրելու, և չէր ներեր որ աղդեցութիւն մը կրէ և սիրոյ առաջարկ մը ընդունելու զիջանի. անբռնաբարելի կը նկատէր սիրելու անկախութիւնը և կը սպասէր որ իր սիրտը սիրէ:

Այսպէս կը դատէր Լեւոնը, և կը խորհէր թէ ան ալ, դարուս դաւակը, կը կարծէր իրաւունք ունենալ հասնելու անպատճառ այն կնոջ որուն ցանկալու քմահաճոյքը ունեցած էր:

— Սիրոյ բախշականութիւններ, կ'ըսէր մտովի Արաքսի:

Ամիսներ անցան, և Լեւոնի Զանքերը ապարդիւն մնացին կքելու համար ա՛նոր սիրտը. մանաւանդ պղտիկցած ըլլալու դաղափարը կը տանջէր ինքը, ու ժողվեց իր բոլոր ուժը:

Չափ դրաւ իր հետապնդումներուն, ու կամաց կամաց, քար դնելով սիրտին վրայ, հեռացաւ իր սիրականին վտանգաւոր ներկայութենէն: Չարաչար կրած էր անոր դիւթազը, և գերմարդկային զոհողութիւններով կրցաւ զսպել իր զգացումները որ ուրիշ ու է խառնուածքի համար ծայրայեղութեանց առաջնորդ ըլլային դուցէ:

Օրին մէկն ալ պղտիկ ճամբորդութիւն մը սարքեց ու անձայն մեկնեցաւ քաղքէն:

Սակայն այդ մեկնումը Արաքսիին ուշէն չի վերպեցաւ: Ընդհակառակը:

Այն վերապահումներուն հակառակ՝ որ մերժումի մը սաստկութեամբ կ'աղդէին Լեւոնին, այդ կինը քիչ քիչ զգացումի մը դարձութեամբ կասկածած էր իր կոյս սիրտին մէջ: Կը վարժուէր սիրելու դաղափարին, համոզուելով հետզհետէ թէ Լեւոն վերջապէս թեթեալարոյ դարպասողներէն տարբեր բան մըն էր: Խորհող միտք մը, որ այնքան ինքնաճանաչ է և դիւրանալորդ, կ'ըսէր ինքնին, կիրքի մը համար չէ որ պիտի ուղէ կնկան մը ոտքը իյնալ:

Եւ ճիշդ այդ միջոցին էր որ Լեւոն, յուսակտուր, նախ հեռու փախած էր իր քղանցքէն, և յետոյ ճամբորդութեան մը անտեղի դաղափարը ունեցած էր:

Արաքսի ատ լսելուն դղրդուեցաւ:

Անոր համակրելի կերպարանքը և համեմուած խօսակցութիւնը յիշեց, էն պղտիկ ման-

րամասնութիւններով զըսողուցաւ. հաճոյք
կը դգար այդ թափառուններէն, կը դգուէր
այդ տարտամ երաղը: Ու, ինչ որ շատ շուտ
հաստատեց, յայտնադէս զգաց սլարապը զոր
Լեւոն ձգած էր իր չուրջ:

Իրեն համար բնական դարձած էր այդ
աղնիւ անձիններկայութիւնը, և հիմակ պէտ-
քի մը պէս կը ճնշէր ատ իր վրայ: Իր աչ-
ուղներուն մէջ կ'որոնէր այն ազերսոտ նայ-
ուածքը որ իր սիրտին ժայռին դէմ կը վըշ-
րուէր. անոր լեզուին ծայրը կըղձար կրկին
լսել այն աղտոտ բառերը, «բայց, Տիկին...»,
«Օհ, սիրտ չունիք», և դեռ կարճ խօսքեր,
միշտ կրկնուած՝ որոնց ուամիտութենէն վաղուց
զլուած էր:

Բայց հիմակ, աւա՛ղ, կ'ուզէր որ իր ծա-
նօթները յաճախ Լեւոնին վրան խօսէին, ա-
նոր սիրոյն մէջ իր հոգին օր օր կը ցանցուէր:
— Լեւոնին ոտանաւորը կարդացլիք, ըսաւ
օր մը իրենց տան մտերիմներէն մին. նորա-
վէպ գրեւը գիտէի, բայց բանաստեղծ ըլլալը
նոր յայտնութիւն մը եղաւ:

Եւ Արաքսի փնտռեց այդ ոտանաւորը սլա-
րունակող Մասիսը, ու քսան հեղ կարդաց,
դոց ըրաւ ան:

Վերնագիրն էր «Ձի հասկցուած»: Այս
բառակը մանաւանդ ծանր ազդեց իրեն, լա-
ցուց խղճը:

Ձի խորհեցաւ զոնկ քե սերն անողո՜ք
Վրճիւնեւ ալ ունի՛ որոնց կ'ենքաբկուիս
Գուցէ օր մը դուն ալ, ո՛վ կիմ, որ անճոգ
կըրցաւ մեծեղ անճուն սերը իմ սիրտիս:
Արաքսի անյաղթելիօրէն կը սիրէր Լեւոնը.
ու չէր կրնար չի սիրել:

Խուովայոյդ սպասեց անոր վերադարձին:

* *

Երբ լրացաւ եռամսեայ արձակուրդը,
Լեւոն վերադարձաւ՝ գեղեցիկ տպւորու-
թիւններ հետը բերելով. այլ եւս բուժուած
էր ան. իր սէրէն յիշատակ մը մնացած էր,
հիւանդագին յուշ մը, փլատակի մը պէս
թափծալից, իրբու սպիացած վէրք մը՝ որ
դեռ ժամանակ մը կը կատաւայ:

Յաւէտ խոյս տուաւ Արաքսիէն և ջանաց
անոր չի հանդիպիլ տեղ մը. աւելի սլաղարիւ-

նով կը կշռադատէր իր ստորնացումը այդ
անհաղորդ և անյողդողդ կնոջ հանդէպ:

Բայց նոյնը չէր Արաքսիին համար:

Ան սպասեց անձկալից առաջին հանդի-
պումին, այնքան շուտ՝ որքան օր օրի ու-
ճացող իր սէրը կը յուսադէր ինքը. ինքնա-
վրտահ իր հրասլոյններուն ուժին վրայ, իր
սիրաղեղ թելադրութեանց անձնատուր՝, ան-
խուսափելի կը գտնէր Լեւոնին համար փնտը-
ուել հանուր իր երաղի առարկան և անոր մօտ
յածիլ զգուշաւոր հետապնդումով մը:

Իրողութիւնը կը պատուէր իր միամտու-
թիւնը: Լեւոն աւելի քան երբեք հեռու կը
փախչէր իրմէ, կը վախնար ան նոյն խօլ իր
հին սիրոյն վրայ անդրադառնալէ. սլայքա-
րէն հաղիւ աղատած էր, և միանգամ ընդ-
միջ համոզուած էր թէ՛ անկարելի փորձին
մէջ չարաչար յաղթուած էր ինք:

Աւելին իսկ: Արաքսին ալ լսեց այն զը-
րոյցը թէ Լեւոն սլտի ամուսնանայ վերջա-
պէս Օրիորդ Մատէն Գ. ի հետ, տեղի տա-
լով ասոր բուռն և տառապադին սիրոյն, զոր
ինք չէր կրցած երբեք փոխարինել, և որ
խօսքի նիւթ եղած էր ատեն մը: Այդ դա-
ղափարը սաստիկ հարուածի մը պէս ցնցած
էր Արաքսին. իր սէրը ա՛լ հիւանդութիւն մը
եղած էր. անոր բուժումին վրայ խորհելով
անքուն գիշերներ անցուց: Միջոց մը փնտ-
ռեց արդիւնեւ այդ բանը. ճար մը միայն
կար — խոստովանիլ իր սէրը — և ատ սլտի բա-
ւէր ելեքտրացիոն Լեւոնը: Ատ չէ՛ր անոր
խաշալը:

Առտու մը, աղուոր արշալոյսը իր տըժ-
գոյն հոգին համբուրեց, սարսուաց ու տեն-
դագին, հետեւեալ նամակը գրեց.

«Լեւոնս,

«Կը զգամ թէ հպարտութիւնը անձնաղո-
հութիւն սլտի ըլլայ ասի՛լէ անդին. ու ես՝
մաշող դաղանիքը քեզի յանձնելու պէտքէն
ընկճուած եմ:

«Ժամանակը և հեռակայութիւնը որ յա-
ճախ սիրտերը կը բաժնեն, իմ քուկինիդ գե-
րի ըրին:

«Կը խոստովանիմ թէ քեզ յանկարծ չի
կրցայ հասկնալ. բայց այսօր համոզուած եմ
թէ քենէ զատ ոչ մէկը սլտի կրնամ սիրել:

«Լազը կէս օրէն վերջ մեզի եկո՛ւր. պի-
տի ըսեմ քեզի թէ ի՛նչպէս կը սիրեմ քեզ :
ԱՐԱՔՍԻ»

* *

Լեւոն պաշտօնատեղին երթալուն պէս՝
գրասեղանին վրայ դտաւ մանիշակաբոյր նա-
մակը. ինկան դիրը տեսաւ ու դողալէն բա-
ցաւ պահարանը : Աչքին չի հաւտաց. անա-
կընկալ էր ատ. կրկին կարդաց, և զգաց ա-
նոր մէջ Արաքսին հոգին :

Տենդոտուած, բոլորովին դզողուած, ելաւ
տեղէն ու պատուհանին առջեւ դնաց կեցաւ :

Անդու կը խաղար իր մանրիկ պեխերուն
հետ : Իր աչքերը կը փայլատակէին. սիրտը
կը տրոփէր ուժգին. ու դեռ մատուրները կը
դողային, որպէս թէ գանձ մը և կամ դա-
գաղ մը բացած ըլլային անոնք :

Դանձ մը՝ երբեմն, դադաղ մը՝ հիմակ,
այդ վարդազոյն նամակը :

— Ծա՛տ ուշ, փսիսաց, ու քանի մը բոպէ
վերջ— շա՛տ ուշ— կրկնեց Լեւոն, նամակը
դրպանին մէջ դնելով, իր յուզման չափ մը
դնելու մատնուած ձիգով մը :

Ապուշի պէս բան մըն էր մինչեւ իրիկուն.
յոգնած մեկնեցաւ՝ սովորականէն քիչ մը
կանուխ :

Հսկայ չէնքին դրան առջեւ շուարած պահ
մը կեցաւ, ու տարտամութեանց մէջ ցնորա-
թափառ այդ հոգին արծուային սլացում մը
ունեցաւ յանկարծ. լոյսի պէս բան մը ցոլաց
իր տոյն ճակտին վրայ՝ որուն տակ փոթո-
րիկ մը պայթած էր : Ա՛լ որոշումը տուած էր.
կառք մը կանչեց և Մատլէնի տան հասցէն
տուաւ :

* *

Արաքսի տառապանքի երկու անտանելի
օրեր անցուցած էր, և երկու օրուան մէջ
անձանաչ եղած էր : Սպասումի վայրկեան-
ները յախտնական թուած էին իրեն. Լեւոն
ոչ հրաւերին պատասխանած էր և ոչ ալ ի-
րեն երկու բառ գրած էր. և այս լուութիւնը
անմահնելի էր ու ջախջախիչ :

Տան պատշգամբ նստած էր օրրաթոռին
մէջ : Կը սիրէր վերջալոյսին հոգ մնալ, սա-
ղարթներու մէջտեղ թաղուած, անրջօրէն, և

իր աչքերը խորասուզել ծովուն հեռաւոր ալ-
քերուն մէջ : Իր սիրահար հոգին ամէն ատե-
նէ աւելի բնութեան կապուած էր, և անոր
դիւթանքներուն մէջ կ'ախորժէր դիտել ցո-
լացումը իր սիրոյն՝ որ կ'աղուորցնէր այլեւս
ամէն բան :

Բայց անձկութիւնը կը սեղմէր ինքը. ա-
ռաջին անգամն էր որ կը զգար այդ յոյժերը
և անբիժ երանութեան հեռապատկերը մի-
այն կը լուսաւորէր ինքը այդ գաղտնիքին
մէջ :

Յանկարծ սպասուհին նամակ մը բերաւ :
Առանց վրան նայելու, խղաժալիտ, սարսը-
ռալէն բացաւ պղտիկ սիրուն նամակը...

— Ա՛հ, դունց շանթահարուածի խեղացը-
նորութեամբ. ու գրեթէ նուազած ինկաւ
աթոռին խորը :

Ազդատումս մըն էր ատիկա :

ԼԵՒՈՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԵՒ

ՄԱՏԼԷՆ ԳԵՈՐԳԵԱՆ

ՆՇԱՆՈՒԱԾ

Իրիկունս սիւքը կը փչէր վարդենիին հոծ
տերեւներուն մէջէն. արեւը շատոնց անձնաս-
պան եղած էր, ու վերջալոյսն ալ կ'ոգեւա-
րէր : Իսկ ծաղիկները պարտէզէն վեր կը զըր-
կէին իրենց վերջին համբոյրները որ գիշերը
կը բուրումնաւէտէին տակաւ :

Հեռուն, գորտերը կը սկսէին կրկնալ. և
ճպուռները իրենց ճրճոսնքներով հոգիները
մեղամաղձիկ կ'ընէին :

Արաքսի պաղ մը զգաց իր թեթեւ բեմ-
եռառին մէջ, ու երկար քունէ մը արթն-
ցածի պէս չորս կողմը դիտեց մէյ մը : Հոգին
կը ցաւէր :

Նայեցաւ նորէն ձեռքին մէջ քրտնած պղ-
տիկ քարդին վրայ, առանց որոշելու մու-
թէն պողած տառերը :

Ու աչքերը անթարթօրէն անոր վրայ սե-
ւեռած :

— Ծա՛տ ուշ, արդարեւ, մրմնջեց : Մեռ-
ցուցի իր սէրը, և իմա ծնաւ : Հիմակ պէտք
է որ սիրեմ անհնարին սէրը, պէտք է որ
տառապալիմ... աւելցուց անուշ, փաղաքուշ
չեչտով մը զոր օղին խոնաւութիւնը կը թրջէր :
Քանի մը վայրկեան նորէն մխրճուեցաւ իր

անհուն թախանքին մէջ . այս անգամ միայն
զգաց իր այրիութիւնը՝ իր դժբախտ սիրոյն
մէջ լքուած ու մենաւոր : Ու մտելով , սար-
տաւելով , ջղաձգօրէն ոտքի ելաւ . մութին
մէջ իր նկուն ու ցայտուն հասակը ցրց-
ուեցաւ՝ բողոքի մը պէս դէպի երկինք , վար-
դենիէն չիւղ մը բրցուց , և

— Շատ ուշ , փափաց կրկին , ու , վար
նետելով չիւղը , կիսաբաց դուռնէն ներս
մտաւ և անհետացաւ ,

Ու գիշերը լալով մոխի ըրաւ վերաւոր
սիրտի այս դառն հեծեծանքը . . . :

Վ.Ս. ՀԱՆ ՄԱՆԷՋԵԱՆ

Մ Ե Ծ Պ Ա Կ Ա Ս Ը

Չափազանց ուրախառիթ երեւոյթ մըն է
որ ժամանակէ մը ի վեր արհեստի կարեւո-
րութիւնը սկսած է շեշտուիլ մեր մէջ :

Ասկէ առաջ այդ մասին բան մը չէր ըս-
ուէր , բայց հիմա մեր թերթերէն ոմանք
սկսած են խմբագրական յօդուածներով մերթ
ընդ մերթ հանրութեան ուշադրութիւնը հը-
րաւիրել այդ ամենակարեւոր հարցին վրայ :

Երկար տարիներէ ի վեր յաջորդաբար մեր
հասուցած սերունդները մասնաւոր հակա-
րութիւն մը ունեցած են արհեստներու դէմ :
Այս ցաւալի երեւոյթը մեր տոմարին նկա-
րագրին մէկ թերի կողմն է , պիտի ըսէի ,
եթէ առաջները երեւելի արհեստաւորներ
երեւան եկած չըլլային մեր մէջ : Նոյնպէս
հիմակ ալ փորձով տեսնուած է որ թուով
չափ ցանցաւ մեր արհեստաւորները միշտ կա-
րողութիւն և ձեռնհասութիւն ցոյց տուած
են իրենց հետեւած արհեստներուն մէջ :

Ասիկա կը նշանակէ թէ ինչպէս շատ մը
գործերու նոյնպէս արհեստական աշխատու-
թեանց ալ կատարելապէս յարմարութիւն ու-
նեցող ժողովուրդ մըն ենք :

Ինչո՞ւ ուրեմն չե՞ք կրցած գէթ մասամբ
օգտուիլ մեր այդ կարողութիւնէն :

Պատասխանը շատ որոշ է : Մեր մէջ կը
պակտին այն միջոցները որոնցմով միայն կա-
րելի է պահանջուած կերպով արհեստ մը սոր-

վիլ և օգտակար անհատ մը դառնալ մեր
ընտանիք երկրին և անոր ժողովրդեան :

Ինչպէս տեսական գիտութիւնները՝ նոյն-
պէս ալ գործնականը ունի իր ուսուցման յա-
տուկ եղանակն ու մեթոտը :

Վարպետի քով կամ ուրիշ ո և է գոր-
ծարանի մը մէջ արհեստ սորվող աշակերտ մը
ընտու չի կրնար հաւասարիլ Արհեստից վար-
ժարանի մը մէջ կանոնաւոր կերպով արհեստ
սորվող աշակերտին :

Առաջինը , թէպէտ կրնայ արհեստի մը
գործնական սկզբունքները իւրացնելով իր
կարգին վարպետ մը դառնալ և իր ապրուս-
տը ապահովել , բայց երբեք անիկա չի կրնար
ո և է օգտակար ազդեցութիւն ունենալ երկ-
րին անտեսական դարգացմանը վրայ : Այդ մեծ
ու կարեւոր գործը միւսին վերապահուած է .

Արհեստից վարժարանի մը մէջ տեսական
ու գործնական կերպով արհեստ սորվող աշա-
կերտներն են , որոնք կրնան երկրի մը տըն-
տեսական , վիճակին մակարդակը բարձրացնել ,
ահագլին դարկ մը տալով անոր վաճառակա-
նութեան և ճարտարութեան : Պոլսոյ մէջ այս
նպատակին յարմար կայսերական մեծ արհեստից
վարժարա՞ն կայ , որ արդէն լակ աշակերտներով
լեցուած ըլլալով՝ չի կրնար որոշեալ թիւէն
աւելի աշակերտ պարունակել :

Ս . Յաւորի Որբանոց-Արհեստանոցը ու-
նինք , որուն նպատակը տարբեր ըլլալով՝ իր
արդի պայմաններուն մէջ ընտու չի կրնար գո-
հացում տալ մեր ակ'արկած մեծ պակասին :

Այդ արհեստանոցը , բոլորովին հեռու
վարժարան մը ըլլալէ , սրբոյ Ֆապրիֆա մըն
է , ուր կ'աշխատուի կարելի եղածին չափ
չափ գործ արտադրել և օգտուիլ ազոց աշ-
խատութիւններէն , միեւնոյն ատեն քիչ շատ
վարժեցնելով զանոնք արհեստի մէջ , որպէս-
զի դպրոցէն ելլելէ վերջ կարենան իրենց
համեստ ապրուստ մը ճարել :

Հիւանդանոցի հարկւրաւոր պատասպարեալ-
ներուն կօչիկները , զգեստները , շէնքին այլ
և ալ կարասիները այդ արհեստանոցին մէջ
կը շինուին : Հոն կը կատարուին նաև զա-
նազան նորագութիւններ որոնք պակաս չեն
ըլլար այդ տեսակ մեծ հաստատութեան մը մէջ :

Տղու մը արհեստ սորվեցնելու նպատա-
կաւ կատարուած անմեթոտ ջանքերը , շատ

անգամ հակառակ արդիւնք առաջ կը բերեն, ենթակային մէջ սպաննելով արհեստի բնական սէրը և անոր տեղ զգուանք ներշնչելով անոր :

Կայսերական արհեստից վարժարանի մասնադէտ Տնօրէն Պ. Լէօն Յօու, որ ֆրանսական արհեստից վարժարանի շրջանաւարտ մըն է, իմ մէկ առաջարկութեանս վրայ դուլելի պատրաստականութիւն մը ցոյց տուաւ՝ օր մը մասնաւորապէս այցելել Ս. Յակոբի Ուրբանոցը և գործարանները աչքէ անցնելէ վերջ, պէտք եղած օգտակար թելադրութիւնները ընել, անշուշտ չկատողութեան առնելով հաստատութեան նիւթական վիճակը : Եթէ Հոգաբարձութիւնը պատճառ մը չունի այս առաջարկը մերժելու, կրնայ երկտողով մը խմցենել Մասիսի խմբագրութեան և օգտուիլ այդ ազնիւ պարոնին բարեացակամութենէն :

Երկրագործութեան, հանքերու և անտառներու նախարարութիւնը, որուն իրաւասութեան տակ կը գտնուի վերոյիշեալ Կայսերական Արհեստից Վարժարանը, շատ զեղեցիկ և օգտակար Տնօրինութիւն մը ըրաւ վերջերս դպրոցին արհեստական ծրագրին մէջէն ջնջելով դերձակութեան, կօշկակարութեան և ավթուաշինութեան պէս երկրորդական արհեստները և անոնց տեղ աւելի ընդարձակելով երկաթագործութեան և մեքենայի վերաբերեալ արհեստներուն ուսուցումը :

Մենք ամէն բանէ առաջ երկրագործ ժողովուրդ մըն ենք. պէտք է մէկդի նետելով Նոյի ժամանակէն մնացած բանն ու բրինձ օգտուիլ գիտնանք նոր ու կատարելագործեալ մեքենաներու ընձեռած անհուն ու անբաղդատելի առաւելութիւններէն :

Այս նպատակին հասնելու համար պէտք է որ արհեստը զարգանայ մեր մէջ :

Ագարակատէր մը երբ ուզէ իր հողերը մեքենայով մշակել, այդ մեքենաները վարելու և եթէ խանդարուին՝ դանոնք նորոգելու համար անպատճառ մեքենագործի մը պէտք պիտի ունենայ :

Օտար մեքենագործները շատ խոտապահանջ կ'ըլլան մեր ագարակներուն մէջ երբ

թալ ծառայելու համար : Այս պարագան խորտչեցնելով հողագործները, պատճառ եղած է որ անոնք չի շէղին իրենց հողը մշակելու անդրջինգեղեան եղանակէն :

Բայց երբոր տեղացի մեքենագործներ ունենանք, այն ատեն գործը կը տարբերի : Հողագործը գիտնալով որ բաւականաչափ ամաւական մը վճարելով պիտի կրնայ իր ուղած մարդը գտնել, պիտի չի վարանի իրեն պէտք եղած մեքենաները բերել տալու :

Անհատնու՞մ դասատու, խմբագիր ու գրադէտ հասցնելու տեղ՝ այդ տեսակ օգտակար արհեստագործներ պատրաստելու համար անհրաժեշտ է որ արհեստից վարժարան մը ունենանք :

Որչափ ատեն որ այդ մեծ պակասը գոյութիւն ունենայ մեր մէջ, կարելի չպիտի ըլլայ մեր զաւակներուն ընդգրկել տալ արհեստական ասպարէզը :

Շատ անգամ երբ թերթերու միջոցաւ կիւմանամ թէ այն ինչ հարուստը սաչափ հազար ոսկի կամ բուսլի նուիրեր է մատուցում կառուցանելու, եկեղեցի մը նորոգելու կամ եպիսկոպոսական ծանրադին ձեռք մը զգեստ կարել տալու համար, սիրտս կը ցաւի խորհելով որ այդ հազարները իրարու քով բերելով կարելի է արհեստից վարժարան մը հիմնել իր հաստատ եկամուտներով :

ԵՐՈՒԱՆԻ ԶԱՎՈՒՇԵԱՆ

Կը խնդրենք էնկիւրիի մեր ընթերցողներէն որ իրենց բաժանորդագրութեան հաշիւները կարգադրել հաճին Դանիէլ էֆ. Աչքեանի հետ որ կը շարունակէ վարել Մասիսի գործակալութիւնը այդ քաղաքին մէջ :

Նոյնպէս, Տրապիզոնի մէջ Մասիսի գործակալութիւնը ստանձնած է Գրիգոր էֆ. Յ. Նզիսէան, որ նոյն աշխատութիւնը կատարած էր երեք տարի Սամսոնի մէջ : Կը հրաւրենք Տրապիզոնի մեր ընթերցողները՝ իրենց բաժանորդագրիւնները յանձնել յիշեալին որուն քով կը գտնուին ընկալագիրները :

Արսօւսքի Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ՕՐԵՒԵԼԻՔ Օրագրի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԴ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Փր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Յ Ճ Ի Ի Ղ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐԻՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԻ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեռով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des bénéfices) ՅՅՈՒԻ եւ ՎՆԱՍՍԿԱՐ դուրքեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏՏՈՐԷՆՈՒՍԻՆ

Պոլիս, Սուլթան Համաժ, Բասաժ Բաքրբեք Օղլու

Մամուճիւղ՝ Դալաթիա, Ինայէթ Խան, գործակալ Միհրան Էֆ. Դաւիթեան:

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՍՏՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Չքանեան աբաղքման

Պալպալեան ամէն օր աղուայի ամէն տե.

սակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Դիշերուան ո՛ր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր ընցուցած ու չինած աղուաները: Յորեկները աղուայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղբասներուն մէջ

“AU TALON D'OR”

Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՉԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱՇՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՏ ԵՒ ԿԱՆԱՆՏ ՀԱՄԱՐ

Էտեւ կաղերու համար պատրաստուած

Կայաքա, Վոյվոսա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ չինուելիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

Կ. Յ. ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՅԱՆՉՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանանք վաճառականական պիտոյից, սպազրական գործերու պատրաստութեան հոգը.

ԴԻՆ ԴԻԻՐԱՄԱՏՆԵԼԻ

Մաքուր եւ արագ գործօնեւորիւն.

Արժէք կանխիկ. 5% զեղչ.

Մանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն ժամամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
ՍԱՄՍՈՆ

ՖԵՆԻԿՍ ԷՍԲԱՆԵՕԼ

ԱՊՈԼՈՆԱԳՐԱԿԱՆ ԸՆԴ

Հրդեհի եւ Կեանքի Ի ԲԱՐԻՉ

Դրամագլուխ՝ 63,228,000 ֆրանք: Դրամա-

տուն Ի Կ. Պոլիս՝ Գրէտի Լիճնէ

Դեր-Գործակալ Կ. Պոլսոյ ճիւղին

ՔԱՌԼՕ ԱՀԱՄԵԱՆ

Կալաքա, Վոյվոսա փողոց Թիւ 103



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՂԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, բախի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ զիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԹԱՅԹԻՉ
ՄԱՂԱՏԱՆ

- | | | |
|----------|---|--|
| ԲԵՐԱ. | } | 1. Մեծ փողոց, Պոն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ. |
| ԿԱՂԱՅԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամկէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյաղլա, Թրամկէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԵԻՍԱՐ | | Չարլը Պոյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Մարդիս Պէյ Տիւղօղլուի տունը:

Սոյն հանրածանոթ շաքարավաճառը՝ Բերայի մէջ իր գործառնութիւնները կեդրոնացած է միակ շէնքի մը մէջ, Շրտակ ճամբայ, թիւ 54, որ իր ընդարձակութեամբը ամէն դիւրութիւն կ'ընծայէ յաճախորդներուն, թէ՛ իրբեւ բաքիսըռի եւ թէ՛ իրբեւ շաքարավաճառ։ Ամրան եղանակին մէջ, խնամով պարաստուած պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր։

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. շաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան շաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ոչ միայն անոնց հայթայթուիլ՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուններու մէջ։

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա, Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101.

1—30



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ



Ընկերութեան զրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,667,667	Ֆրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիչներ ու տոկոս	54,000,000	»
Նրաշխաւորութեան գումար	122,000,000	»
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000	»

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Բարափին վրայ, Մախսուսան հին տեղը

Ընդհ. ԲԵՏԻՆ
Ա. ՀԻԻՐ ՄԻԻԶ

Ընդհ. Դորձակալ
ԹԵՈՏՈՐ ՌԵԲԵՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴԸ ԵՒ ԻՐ ՅԵՂԸ, հեղ. Բրոն. Ա. Ալպրէսք, Թարգմ. Մ. Կ. Նազիկեան ԷՖ. Սեռային առողջարանութեան կարեւորագոյն գիտելիքներուն վրայ խօսող սոյն ժողովրդական գիրքը երկրորդ տպագրութեամբ յոյս տեսաւ Ը. Մատթէոսեան տպարանէն։ Դին 5 զրոյ։ Վաճառման կեդրոնատեղին է Պալենց գրասուն Կ. Պոլիս։

ԳՐԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ անգլիերէնէ հայերէն, որ կը լրացնէ կարեւոր պէտք մը ուսանողներու, ճամբորդներու եւ առեւտրական գործով զբաղողներու համար։ Դին 8 զրոյ։ Կը գտնուի բոլոր գրաւաճառներուն քով։ Կեդրոնատեղի Սաքաեան տպարան, Կալաթա։

ՄԱՌՇ ՎԵՌԱՆՏԱ, գաղնակահար Ահարոն էֆ. Մըսրուեանի հեղինակած սոյն նուագատեարը կը ծախուի «Անտէլիպ» վաճառատունը՝ Պաճէլ-Դարու եւ Ղալաթիա, Բոճէնտին։ Կը եւ Բրիտանիա Ի Բերա, եւ Սկիւտար հեղինակին բնակարանը։

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ . ԹԱԳ . ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ . ԸՆԿ .

Հրդեհի եւ կեանքի (ի վիճենա)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹԵՐԵՅԵԱ

Ապահովագր . ԸՆԿ . Ընդդեմ հրդեհի (ի ԳԱՐԹԱՃԷՆ)

ԱԼԼԵԱՆՅԱ

Մովայից ապահովագր . ԸՆԿ . (ի ձՆՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Քուէտի Լիօնէ

Ընդի . եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Դրասենեակ , Պոլիս , Հանօբուլօ խան , Թ . 52—53—54—55—56

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ—ՄԱՆԿԱԲԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց

(վիայեալ Բաքիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւանդութիւններ , կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ՝ վերջին կատարեալ գործեալ դրութիւններով :

Բարիզի , Նանսիի հիւանդանոցներուն մէջ երկար տարիներ օգնական—բժիշկի (էքսքերն) պաշտօնը վարած ըլլալով , գործնական ու փորձառական երկար ուսումնասիրութիւններ ընելէ վերջ , այս անգամ Կ. Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա , Թարլա Պաշը , Թիւ 136 :

Ծանօթ .—Հիւանդներ կ'ընդունի ամէն օր կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ , ժամը 1—4 (Ը . Ն .) : Երեքշաբթի օրերը միեւնոյն ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հիւանդները :

17—20

ԴԱՇՆԱԿԻ ԴԱՍ

Դաշնակահար օրերորդ մը , որ խիստ լաւ մէթոտ մը ունի՝ նորավարժները մարզելու դաշնակահարութեան , կը փափագի այցելութեամբ դաս տալ խոնկերու մէջ : Դիմել՝ Մասիսի խմբագրութեան :

4—4

HOTEL «FERAH»

ՕԹԵԼ «ՖԵՐԱՀ»

Բրինքիրօ , Նիզամի պողոտային վրայ , ծովահայեաց , ընդարձակ պարտէզներու մէջ : Վարձակալը , Առաքել Տեքեկեան որ այնքան խնամօք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի հանրաժանօթ նախկին Դասպար ճաշարանը , յանձն առած է նիւթական ամէն զոհողութիւններ ընել՝ իր բազմաթիւ յաճախորդներուն հանդատութեանը համար :

Գիները չափաւոր . շաւ և մաքուր մանուշ , պանդոկը բաց է Եւրոպական մայիս մէկէն սկսեալ :

6—10

ՏՈՔԹ . Ն. ՄԱՍԻՍ (Բերա , Թագսիմ փողոց , ք . 15) Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ , կը դարմանէ մասնաւորաբար , նոր մեթոտներով եւ խնամով , ստամոքսի , աղեաց , միզային ճամբաներու հիւանդութիւնները , ջղային ակարութիւնները , դաղվիական ակտերը (սիֆիլիս եւ այլն) և մորթի հիւանդութիւնները : Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը :